

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ XI-XV դդ.

Ա. Դ. ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս

XI-XV դդ. Հայաստանի ազգաբնակչության կազմում տեղի ունեցած տեղաշարժերը մեծ մասամբ արտաքին ազդեցությունների հետևանք էին:

Երկրում տեղի ունեցած զարգացումներն անմիջականորեն կապված էին Արևելքի խաշնարած ցեղերի դեպի Արևմուտք առաջխաղացման հետ: Այդ ներթափանցումները տափաստանային արոտավայրերի աստիճանական հյուծման հետևանք էին կապված չոր կլիմայի պայմաններում դրանց ոչ արդյունավետ օգտագործման հետ: Քոչվորական կյանքի կացութաձևի առկայության պայմաններում խաշնարածների զանգվածային տեղաշարժերը դեպի հայկական լեռնաշխարհի պարբերական բնույթ էին կրում: Հաստատվելով նվաճված տարածքներում, նրանք ձգտում էին ձեռք բերել հետագա կողոպտչական արշավանքների նոր հենակետեր:

Առաջավոր Ասիայում տեղի ունեցած իրադարձությունները փոխեցին տարածաշրջանի ոչ միայն քաղաքական քարտեզը «այլև ցեղային կազմը՝ Արևելքի հին ժողովուրդների՝ հույների, հայերի, պարսիկների, ասորիների և ուրիշների հաշվին»¹:

Դեռևս V-XI դդ. ընթացքում տեղի ունեցած արտագաղթերի և բռնագաղթերի հետևանքով գրեթե ամբողջությամբ հայացել էին Կապադոկիայի, Պոնտոսի, Հյուսիսային Միջագետքի, Կիլիկիայի, Ասորիքի որոշ շրջաններ²: Դրա փոխարեն նվազել և նոսրացել էր հայ ազգաբնակչությունն իր պատմական հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում:

XI դ. առաջին կեսին սելջուկյան արշավանքներն «ամայացնելով Հայաստանը և թուլացնելով Բյուզանդիայի արևելյան սահմանների պաշտպանական գծերը, հող նախապատրաստեցին ոչ միայն ամբողջ Հայաստանի, այլև Բյուզանդական կայսրության Փոքր Ասիայի արևմտյան նահանգների նվաճման համար»³: Ակնհայտ է դառնում սեփական սահմանները պաշտպանելու Բյուզանդիայի անկարողությունը: Կայսրության ուլաքացած ռազմաքաղաքական

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Ե., 1976, էջ 471:

² Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 13, Արախանյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Ե., 1964, էջ 51, 54-55:

³ Հայ ժողովրդի պատմություն, հ. III էջ 454:

ծեռնարկումներն ամարդյունավետ էին: Սելջուկները նվաճում են Չայաստանը և հայաբնակ Արևելյան Փոքր Ասիան, որոնք իրենց վրա ընդունեցին նրանց հարվածների ամբողջ ծանրությունը⁴: Արյունալի պատերազմները հանգեցրեցին նվաճված տարածքների բնակչության թվաքանակի կրճատմանը, քաղաքային կյանքի և գյուղատնտեսության անկմանը: Սելջուկ-թուրքերի կործանարար արշավանքների ժամանակ հայ ժողովուրդը ունեցավ անհամար մարդկային կորուստներ: Արժեք քաղաքում նվաճողները կոտորեցին 150 հազար մարդ⁵: Ուռհայում (Եդեսիա) 30 հազար⁶, Օկոմի ավանում 30 հազար⁷: Բլուր ավանում 7 հազար⁸: Անիի բնակչությունը (շուրջ 100 հազար)⁹ կոտորվեց կամ գերեվարվեց: Բասենի ճակատամարտից (1048 թ.) հետո սելջուկները գերեվարեցին 100 հազար մարդ, իսկ 1064 թ. ռազմարշավի ժամանակ՝ 50 հազար¹⁰: Այլ թվական տվյալների բացակայության պատճառով հնարավոր չէ պարզել, թե որքան մարդ է սպանվել և գերեվարվել մինչ այդ Չայաստանի այլ խոշոր քաղաքներում և մյուս բնակավայրերում: Նշենք միայն, որ 1045 թ. սելջուկ-թուրքերը Մելիտենում սպանեցին բյուրավոր մարդկանց¹¹: Կոտորածներին, գերեվարությանը և կողոպուտներին զուգահեռ իրականացվում էր բռնի կրոնափոխություն (Մարմաշեն, Անիի շրջակա գավառներ)¹²:

Սելջուկ-թուրքերի իրար հաջորդող արշավանքներն առաջ բերեցին նոր արտագաղթեր դեպի Բյուզանդիա՝ Կապադոկյայի հյուսիսային և հարավային շրջաններ, Կիլիկիա և այլուր¹³, 70-ական թվականներին, երբ սելջուկ-թուրքերը ներխուժեցին Փոքր Ասիայի արևելյան շրջաններ, այստեղ կենտրոնացած հայ բնակչության զգալի մասը տեղափոխվեց Կիլիկիա¹⁴:

⁴ Նուն տեղում, էջ 458:

⁵ Մաթեոս Ուռհայեցի, ժամանակակազրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 102-103, Բյուզանդական աղբյուրներ, Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն բնագրից, Առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1979, էջ 16:

⁶ Stü Spers Vryonis, The Decline of Medieval Hellenism in Asia Minor and process of islamisation from the eleventh trough the fifteenth century, London, 1971, էջ 28:

⁷ Արիստակիսի Լաստիվերտցոյ Պատմութիւն, Ե., 1963, էջ 102:

⁸ Արիստակես Լաստիվերտցի, էջ 110:

⁹ Թ. Խ. Հակոբյան, Անիի պատմություն, Ե., 1982, էջ 236:

¹⁰ Օտար աղբյուրները Չայաստանի և հայերի մասին, Արաբական աղբյուրներ, Բ, Իբն ալ-Ասիր, Ե., 1981, էջ 214, 220:

¹¹ Օտար աղբյուրները Չայաստանի և հայերի մասին, 12, Ասորական աղբյուրներ, Բ, Ամանուն Եդեսացի, ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ.Յ. Տեր-Պետրոսյանի, Ե., 1982, էջ 29:

¹² Իբն ալ-Ասիր, էջ 218-219:

¹³ Արիստակես Լաստիվերտցի, էջ 34, Մաթեոս Ուռհայեցի, էջ 151, Սամուէլի քահանայի Անցելոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 117:

¹⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ, III էջ 673-674:

XI դ. վերջին նվաճված Հայաստանում տարածվեց թուրքական ցեղերի գաղթականությունը¹⁵: Թուրքալեզու տարրի հայտնվելու հետևանքով տեղաշարժեր են նկատվում Հայաստանի բնակչության ազգային կազմում: Սկզբնաղբյուրների տեղեկության համաձայն՝ XII-XIII դդ. Հայաստանի մի շարք քաղաքներում (Կարս, Կարին, Երզնկա, Ամիդ, Եդեսիա, Շամքոր, Նախ-ճավան, Սուրմարի, Դվին) և գավառներում (Մարանդ Գեղարքունիք, Որոտն և այլն) զգալի թիվ են կազմել իսլամ դավանողները¹⁶: Սելջուկ թուրքերի տիրապետության շրջանում իրականացվել են մի շարք բռնագաղթեր: Միայն 1196 թ. Իկոնիյի սուլթան Ղիյաս ադ-դին Քեյ Խոսրովը Հայաստանից Ալշեհիրի շրջանն է տեղափոխել և բնակեցրել 70 հազար հայերի¹⁷:

XI-XII դդ. սկսվում է քրդական ցեղերի աստիճանական տեղաշարժը դեպի Հայաստան: Նրանց ճնշման տակ Փոքր Աղբակի և Որսիքանքի շրջաններում հաստատվում են ասորիներ¹⁸: Քրդական տարրը Հայաստանում կենտրոնանում է երկրի հարավային նահանգների (Հայոց Միջագետք, Աղծնիք, Կորճայք) գավառներում¹⁹: Հայաստանում, Վրաստանում և Ատրպատկանում Խորեզմի թագաժառանգ Ջալալեդդինի յոթամյա ասպատակությունների ժամանակ շարունակվեց քրիստոնյա բնակչության բռնի կրոնափոխությունը (Տփղիս, Գանձակ, Նախճավան, և այլուր)²⁰:

XII դ. վերջին XIII դ. սկզբին հայ- վրացական զինական համագործակցության հետևանքով Հյուսիսարևելյան Հայաստանն ոչ միայն ազատագրվեց սելջուկ-թուրքերի տիրապետությունից, այլև դարձավ միատարր ազգաբնակչություն ունեցող երկրամաս²¹: Մոնղոլական արշավանքների նախօրյակին այն ամբողջությամբ եղել է հայաբնակ: XIII դ. կեսերին Հյուսիսարևելյան Հայաստանի բնակչության թիվը եղել է 1,6-1,9 մլն, իսկ ամբողջ Հայաստանում (առանց Կիլիկիայի)՝ 3,5-4 մլն²²:

¹⁵ Մելիքսեթ-բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Ե., 1934, էջ 217:

¹⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 107, 163, 276, Մաթեոս Ուռհայեցի, էջ 205, 334-335, Իբն ալ-Ասիր, էջ 231, 271, Մելիքսեթ-բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ.Բ,Ե., 1936, էջ 12,43-44:

¹⁷ Հայ ժողովրդի պատմություն, էջ 502:

¹⁸ Հարությունյան Բ.Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 2001, էջ 289:

¹⁹ Adonts N., Kurdish Intrusion into Armenia, The New York, 1920, vol. 14, N 1, p. 5.

²⁰ Կիրակոս Գանձակեցի, էջ 226:

²¹ Նույն տեղում, էջ 163, Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնյաց, Թիֆլիս, 1910, էջ 391-392, Մելիքսեթ-բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, էջ 12, 20, 34-35:

²² Տես Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 55:

XII դ. և XIII դ. սկզբին շարունակվեցին քարթվելական էթնիկական խմբերի ներթափանցումները Հյուսիսային Հայաստան և վրացադավանության տարածման դեպքերը Կրաստանին անցած գավառներում (Ջավախք, Սամցխե և այլն), որոնք գերազանցապես հայաբնակ էին²³:

Մոնղոլական արշավանքների ժամանակ Հայաստանի հարավային և արևմտյան շրջաններում (Իկոնայի սելջուկյան սուլթանության և Եգիպտոսի Այուբյան սուլթանությանը ենթակա հատվածներում) տարբեր ժամանակներում հաստատված էթնիկական խմբերը (թուրքեր, քրդեր, արաբներ, հրեաներ, ասորիներ, որոնք բնակվում էին Կարին, Կեսարիա, Խլաթ, Մանազկերտ, Արճեշ քաղաքներում²⁴) կիսեցին հայ ազգաբնակչության ճակատագիրը՝ ենթարկվելով կոտորածի ու գերեվարության դադարեցրին գոյություն ունենալուց²⁵: Այնինչ ոչ քաղաքաբնակ հայությունը, որ երկրի բնակչության մեծամասնությունն էր կազմում շարունակեց գոյատևել: XIII դ. կեսերին նույնիսկ Իկոնիայի սուլթանության բնակչությունը գրեթե ամբողջությամբ կազմված է եղել հայերից և հույներից²⁶:

XIII դ. առաջին կեսին տեղի ունեցավ նոր նվաճողների՝ մոնղոլների և թուրքալեզու այլ ցեղերի տեղափոխություն դեպի արևմուտք: XIII դ. երկրորդ կեսին Հայաստան գաղթեցին թուրքմենները²⁷: Այդ ցեղերի ներխուժումները էթնիկապես մասնատեցին Հայկական լեռնաշխարհը, որը կործանարար հետևանքներ ունեցավ հայ ազգաբնակչության համար: Նրա մի մասը կոտորվեց: Այնուամենայնիվ, XIII դ. վերջերին Հայաստանի՝ որպես բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր ունեցող մեծ երկրի հիմնական բնակչությունը կազմել են հայերը²⁸: Մոնղոլական տիրապետության շրջանում Հայաստանից արտագաղթը մեծ չափեր ընդունեց: Տեղաշարժը կատարվում էր տարբեր ուղղություներով՝ Փոքր Ասիա, Բալկաններ, մերձավորարևելյան և հյուսիսկովկասյան

²³ **Н. Д. Муклыхо-Маклаў**, Географическое сочинение XIII в. на персидском языке. Ученые записки института востоковедения, м. IX, Ծ.-խ., 1954, էջ 198, Կիրակոս Գանձակեցի, էջ 279, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտալ-Համալի, Արուլ-Ֆիդա, Իբն Շադադ, կազմեց Յ.Թ. Նալբանդյան, Ե., 1965, էջ 12, 111, 128, 161, 190, 238, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 574-577:

²⁴ Շահնագարյան Ա. Հայաստանի արևմտյան և հարավային շրջանների գրավումը մոնղոլների կողմից, ՊԲՀ, 2004, N 3, էջ 171-178: Ավերված քաղաքները, բացառությամբ Կարինի, Գանձակի և Արճեշի, վերաշինվեցին (Կիրակոս Գանձակեցի, էջ 237, 293): (Տե՛ս Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Ա, Ե., 1932, էջ 30):

²⁵ **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Գ, Ե., 1977, էջ 349:

²⁶ **Հակոբյան Հ.**, Ուղեգրություններ, հ. Ա, Ե., 1932, էջ 48:

²⁷ Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. I, Ե., 2003, էջ 35:

²⁸ **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1984, էջ 350:

չրջաններ, Էգեյան ծովի կղզիներ: Իրականացվել են մաս հայերի բռնագաղթեցումներ և վերաբնակեցումներ Ոսկե Հորդայում²⁹:

XIII դ. ուժեղ էր գաղթականության հոսքը դեպի Կիլիկիա: XIV դ. երկրորդ քառորդից սկսած, երբ Կիլիկիայի հայկական թագավորության անկումը դարձել էր անխուսափելի, գաղթը դեպի Կիլիկիա դադարում է³⁰:

XIV դ. վերջերին Լենկ Թեմուրի դեպի Հայաստան կատարած կործանարար արշավանքների ժամանակ ամայացան ու անմարդաբնակ դարձան ամբողջ երկրամասեր³¹:

XIV դ. վերջերին և XV դ. սկզբին Հայաստանում հաստատվեց թուրքալեզու ցեղերի նոր գաղթականություն³²:

Հայաստանի բնակչության կազմում տեղի ունեցած ժողովրդական լուրջ փոփոխությունները վերաբերում են XIV դ. վերջին և XV դ. սկզբին: Այդ ժամանակահատվածում Հայկական լեռնաշխարհ թափանցած թուրքալեզու նոր ցեղերը հաստատվեցին կոտորածների, տեղահանության և գերեվարության հետևանքով նվազած ու նոսրացած հայ ազգաբնակչության մեջ (Սուրմարիի, Արտազի, Կոզոփտի, Ալաշկերտի, Նախճավանի շրջաններում, Սյունիքում և Դաշտային Ղարաբաղում)³³: Նոր թափով շարունակվեց դեռևս մոնղոլական տիրապետության շրջանում վերսկսված հայ բնակչության հարկադրական կրոնափոխությունը³⁴:

Ծայրահեղ չափեր ընդունեց արտագաղթը ոչ միայն բուն Հայաստանից, այլև Կիլիկիայից: Հայ բնակչության խոշոր զանգվածներ գաղթեցին դեպի Լեհաստան, Պարսկաստան, Իտալիա, Բուլղարիա, Վալախիա, Մոլդովա³⁵: Նրանց մեծ մասը հաստատվեց Ղրիմում: Արդեն XIV-XV դդ. Ղրիմի թերակղզու («Ծովային Հայաստան»)³⁶, բնակչության մեծամասնությունը կազմում էին հա-

²⁹ **Զուլպյան Մ.**, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, քաղաքական պատմություն, Ե., 1990, էջ 85-90:

³⁰ Պատմութիւն Լենկ Թիմուրայ, Երուսաղեմ, 1873, էջ 189, Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Ա, էջ 106:

³¹ **Հակոբյան Հ.**, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 109, 116-117, 137-139: Դաշտային Ղարաբաղի և Նախիջևանի բնիկ ազգաբնակչությունը բռնությամբ տեղահանվեց Լենկ Թեմուրի որդու՝ Միրանշահի գահակալության տարիներին: Այդ երկրամասում բնակեցվեցին տասնյակ հազարավոր քոչվորներ, որոնք թամուրյանների ռազմական հենարանն էին (տես Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1972, էջ 69):

³² **Թովմա Մեծփեցի**, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Ե., 1999, էջ 108-109, Մանանդյան Հ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 379:

³³ **Արրահամյան Ա.Գ.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Ե., 1964, էջ 203, 245-246, 333-334:

³⁴ **Heyd W.**, Histoire du commerce du Levant, au moyen-age, V. II, Amsterdam, 1967, p. 172.

³⁵ **Меликсет-Беков Л.**, Армянские древности в Аккермане, Тбилиси, 1911, էջ 7:

³⁶ **Արրահամյան Ա.Գ.**, նշվ. աշխ., էջ 179:

յերը³⁷։ Սակայն Կոստանդնուպոլիսը թուրքերի կողմից գրավելուց հետո «դա-
դարում է ծովային հաղորդակցությունը Սև և Միջերկրական ծովերի միջև։
Դրիմը կտրվում է արտաքին աշխարհից և ընկնում փակուղու մեջ»³⁸։ Թուրքե-
րի կողմից թերակղզու գրավումից հետո կոտորածներից փրկված դրիմահա-
յության զգալի մասը տեղափոխվում է Ուկրաինա, Լեհաստան, Մոլդովա³⁹։

Այդ ընթացքում կերպարանափոխ եղավ բնակչության ցեղային կազմը
ինչպես Հայաստանում, նույնպես և Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրնե-
րում⁴⁰։ XV դ. Հայաստանում այլ էթնիկական խմբեր են հիշատակվում Բաղե-
շում⁴¹, Վանում⁴², Ոստանում⁴³, Խլաթում⁴⁴, Կալահոքյան բերդում⁴⁵, Տոսպ գա-
վառում⁴⁶, Կարսում⁴⁷, Երնջակում⁴⁸, Մակվում⁴⁹, Երզնկայում և Կամախում⁵⁰։
Ժամանակաշրջանի համար նոր իրողությունն այն էր, որ XIV դ. վերջերին և
XV դ. սկզբին Հայաստանի հարավային շրջաններում հաստատված քրդական
ցեղերն իրենց ենթարկելով հայ ազգաբնակչությանը, հիմնել էին մի շարք իշ-
խանություններ։ Հայաստանի ամենախոշոր ու հզոր քրդական իշխանությունը
Բաղեշի ամիրայությունն էր։ Նրա «ամիրանների տիրապետությունը տարած-
վում էր Բաղեշի, Խլաթի, Մուշի, Խնուսի, ինչպես նաև Բասենի ու Ավնիկի վրա.
որոշ ժամանակ անց նրանց էր ենթարկվում նաև Մանազկերտի շրջանը»⁵¹։
Խոշոր իշխանություններ էին նաև Խիզանի և Ոստանի ամիրայությունները⁵²։
Փոքր իշխանություններից էին Հագրոյում, Սասունում, Ջերմուկում, Սպարկեր-
տում, Բալուում, Մժնկերտում և այլ վայրերում ձևավորված ամիրայություննե-
րը։ Քրդական իշխանությունները թեև ճանաչում էին կարակոյունլու, ապա

³⁷ Նույն տեղում, էջ 184։

³⁸ Մանանդյան Հ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 349։

³⁹ Մանր ժամանակագրություններ, հ. II, Ե., 1956, էջ 221։

⁴⁰ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480 թթ.), կազմեց Լ.
Ս. Խաչիկյան, Ե., 1956, էջ 326։

⁴¹ Նույն տեղում, էջ 176։

⁴² Նույն տեղում, էջ 335։

⁴³ Նույն տեղում։

⁴⁴ Թովմա Մեծոփեցի, էջ 170։

⁴⁵ Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ. Ե., 1984, էջ 426։

⁴⁶ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450թթ.), կազմեց Լ.
Ս. Խաչիկյան, Ե., 1956, էջ 326։

⁴⁷ Նույն տեղում, էջ 353։

⁴⁸ Նույն տեղում, էջ 601-602։

⁴⁹ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480 թթ.), կազմեց Լ.
Ս. Խաչիկյան, Ե., 1958, էջ LIV

⁵⁰ Նույն տեղում, էջ LVI, LVIII.

⁵¹ Նույն տեղում, էջ LVIII.

⁵² Նույն տեղում, էջ XI, XXVI-XXVII, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 36,42-44, 48,
Ղարազոյան Ա., Ժողովրդագրական տեղաշարժերը Հայաստանում (մ.թ.ա. II – մ.թ. XV դդ.), Ե.,
2005, էջ 44, 46, 52։

ակկոյունլու թուրքմենների գերակայությունը, սակայն հաճախ դրսևորում էին կենտրոնախույս ձգտումներ: Նրանց դեմ համառ պայքար ծավալեցին թուրքմենական ցեղերը: Արդյունքում քրդական իշխանությունները վերացվեցին, իսկ քրդական տարրը մասամբ կոտորվեց կամ հնազանդվեցվեց:

XV դ. թուրքմենական այդ ցեղերի միջև բազմաթիվ բախումներ տեղի ունեցան: Քաղաքական գերիշխանության համար պայքարում նրանք սպառեցին կենսական ուժերը: XVI դ. նրանց փոխարինեցին Օսմանյան Թուրքիան և Սեֆյան Պարսկաստանը:

XI-XV դդ. Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած ժողովրդական տեղաշարժերի դիտարկումը բացահայտում է մի կարևոր օրինաչափություն, տարածաշրջանում հաճախ փոխվել է իշխող օտար տարրը, իսկ կոտորածներից, բռնի տեղահանումներից և արտագաղթներից խիստ նվազած հայ ժողովուրդը կրկին շարունակել է գոյատևել իր պատմական հայրենիքում՝ իբրև բնակչության գերիշխող էթնիկ տարր:

Բանալի քառեր – Շամքոր, Կարին, Կարս, Երզնկա, Ամիր, Եղեսիա

ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В АРМЕНИИ В XI-XV вв.

A. A. KARAGEZYAN

*Кандидат исторических наук,
преподаватель Гаварского государственного университета*

В статье рассматриваются демографические процессы происходящие в Армении в XI–XV вв.

DEMOGRAPHIC PROCESS IN ARMENIA DURING XI-XV CENTURIES

A. H. GHARAGOZYAN

*Candidate of Historical Sciences,
GSU lecturer*

The subject of discussion in this article is the depographic process in Armenia during XI-XV centuries.